16. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆՈՋ ԱՄՈԹԱՆՔԸ

Ժամանակով իրեք ջրհել տղա գելնան, կէրտան օտար էրկիր աշխատելու։

Շատ կէրտան, քիչ կէրտան, աստված գինա, կէրտան մի ծերուկի կը հանդիպին, օր ուրին մեկ հոլրք մի շիներ ա, նստեր ա մեջ, ինչ ճամբորդ օր հանդիպի, կը կանչա, քենի մի օսկի կառնի ու խրատ մի կիտա, ինքը էն խրատի փարով կապրի։

Էդ տղեք կըսին.— Պապե, էստեղ ի՞նչ կէնիս։

Կըսե.— Ընձի հինգ օսկի տուր, քըզի խրատ տամ։

Էն մեկ կըսա.— Տղեկնե՛ր, արեք հինդ օսկի իտանք, էտի թըղ մըզի խրատ տա։

Էն մեկել էրկուս կը ծիծղան ըտոր վրեն, կըսին.— Քենիմ՝ օսկի բերեր ինք, դեմու նավլոն դատի, էն էլ տա իտա հալիվորո՞ն։

Մեկել էրկուս կէրտան, էն մեկ կը մնա, հինգ օսկի կիտա, հալիվոր կըսե.— Ինչ տեղ օր կէրտաս, օրը հրամգա կէղնի, էդ գեղ մհ՝ընցընի, չէղնի թե ուրիշ գեղ հեռու էղնի, վնաս քաշես։

Տղեն կըսե.— Պապե, էլ հ՝ուրիշ։

Կըսե.— Չէ՛, չկա։

Տղեն թողե կէրտա, հասնի ուր հ՝ընկերտաննուն, կըսա.—Հինկ օսկի տվի, մեկ խրատ տվեց։

Հ՝ընկերտանք կըսին.— Տղա՛, ղու ծուռ իս, գնա՝ առ քու փարեն, արի՛։

Տղան ա, չար նաչար կը դառնա, կըսա.— Պապե՛, տուր իմ փարեն։

Պապեն կըսա.— Հըղար խուռուշի խրատ տվի, դրա դո՛ւ դավի կէնի՞ս։— Պապեն կըսա.— Հինկ օսկի լե տուր, խրատ տամ։

— Ա՛ռ բդի հինկ օսկի լե,— կըսա ու կիտա։

Հալիվոր կըսա.— Ի՞նչ տուն օր կէրտաս, ինչ օր քու հ՝առեչ ըներին, մրսի «հե՛րք ա»։

Կըսա.— Էլ հ՝ուրի՞շ։

Կըսա.— Էլ չկա։

Տղեն էլման կէրտա, կը հասնի հ՝ընկերտաննուն։

— Տղա,— կըսեն,— փարեն բերի՞ր։

Տղեն կըսա.— Չէ՛, վո՛լե, հինկ օսկի տվի, խրատմ լե սովըրցուց ընձի։

Հ՝ընկերտանք կըսին.— Վոլե, էդի զուր խելք կորցուցեր ա։

Ասին.— Տղա՛, ջանըմ, գյոզում, գնա՛, փարեք բի։

Տղի չարեն կը կտրի, էլման կը դառնա, կէրտա, կըսա.— Պապե՛, իմ փարեք տուր։

— Հարիր ապսո՞ս իմ խրատներ, տղա՛,— կըսա պապեն,— օր էժան տվի քըզի, հ՝ենտի էկեր իս, փարեն գուզի՞ս։

Տղեն կըսա.— Պապե՛, ըսկի չէ՛, ուրիշ խրատմ՝ տո՛ւր։

Հալիվոր կառնի հինկ օսկին, ուրիշ խրատմ լե կիտա։

Կըսա.— Ինչ զնտի օր կը մոտենաս, հարի ուրիշ չզարկա, չընցնա դնտ, չէղնի, չէղնի դու դարկիս գետ։

Տղեն շատ լավա գընկնա, կըսա.— Պապե՛, փարա չունիմ, բննիմ՝ խրատ լե տուր ընձի։

— Տղա՛,— կըսա,— օր փարա չունիս, տվեցի քու խաթր, քենիմ՝ լե խրատ կիտամ քըզի. երոր կը կարգվիս, ախճկա տիրոջ հետ հըմլա բարիշի ըսե. «Ես քու ախճիկ գուզիմ, հըմա չի տամ տանիք դարձ, հ՝ըկեր խապուլ կէնիք, դուզիմ»։ Չէղնի-չէղնի ճամբիս հոր տուն դարձ. դը գնա՛, աստված հըտ քե։

Տղեն կէրտա հ՝ընկերտաննուն կըսա.—Հինկ օսկի լե տվի։

Ընտոնք կըսին.— Մենք զէն ու զէն չը գինանք, մեր տաս օսկին քըզնե կառնինք, քու հինկ օսկին գո՛ռ թը տվեր ես։

Տղեն կըսա.— Իմ պարտք էղնի՝ հ՝առեչ աշխատիմ, ձեր փարեն աամ, հ՝ետև աշխատիմ ընձի։

Կէրտան Զետկանա պես դեղ մի, հըրամգա կէղնի, էտ տղեն կըսա.— Արեք չէրտանք, մեր հ՝առեչ սար ու ձոր ա. կէղնի, օր գեղ հեռու էղնի, գիշեր տա վըր մրզի։

Հ՚ընկերտանք կըսին.— Հա՛, հա՛ դրռ կես օր ա, հալիվորու խրատ պտի պահա, օր մըզի ակլու էնա։

Տղեն կըսա.— Ես չգամ, պլե դուք կէրտաք լե, գա՛ցեք։

Էտոնք կէրտան, տղեն կը քնի էտ գեղ։ Լուսմութուն կէրտա հըտ ճամբուն, ինչ օր Զետկանով էրտա դեմի Քոբրտ-Ալի, կը տեսնա օր, օհո՞, էրկու շանտակ վրը ճամբուն։ Մոտկնա, կաշկա օր հ՚ընկերտանքն ին, կըսա. «Տեսա՛ր, հալիվորու խոսք հ՚ելավ, հըլալ էղնի էն հինկ օսկին»։

Տղեն շատ ու քիչ գնաց մեկ գետիմ հ՚ըռաստ էկավ։

Տղեն ա, հալիվորու խրատ միտք հ՚ընկավ, նստավ գետի ափ, տեսավ մեկ ձիավորմ՚, խուրճին լիք օսկի, ձիու թարքին կապուկ, էկավ, հըմա թավաքալի զրկեց գետ։ Զրկելու պես սըկվավ հ՚ինք ու ուր ձին, մեկ լե տեսավ օր ձին հ՚ելավ, հ՚ինք չկա։ Ձին դառցավ ասըռավ փլին։ Տղեն գնաց, ձին հանեց, տարավ տավլեց գետի ափ, թամք հ՚իջուց վրեջեն, տեսավ խուրճի մի օսկի։ Հեծավ զձին, ջրի հետ գնաց ցած։ Տեսավ օր հոտաղ մի մալ կարծրծուցեր, ըսեց.— Տղա՛, բըհոռ դինա՞ս։

Տղեն ըսեց.— Հա՛, հ՚որի՞ն չէ։

Ըսեց.— Ա՛ռ քըզի օսկիմ՚, բըհոռ ցըցու։

Հոտաղ հըմա շուտ զուր չորեր հանեց, օսկին առավ, գրեց ուր, շորերու մեշ, հ՚ընկավ ձիու հ՚առեշ, գնաց էն դեն, ըսեց.— Դը գնա՛, հըլալ էղնի քզի էտ օսկին։

Գնաց մեկ դովլաթվոր իշխանիմ տուն խոնախ էղավ։ Էտ տան տեր տաս-քսան դոշակ կը բերա, կը փռա հ՚օդեն, տղեն ըսկի ձեն չը հանա։ Ջայ, ղայվա անհրսապ կը բերա, տղեն էլման ձեն չհանա։ Հաց լե անհրսապ կը բերա, էլման ձեն չէնա։ Խոլասա, տղեն կը պարկի քնի։ Տանտեր կը հերսոտի, կէրտա տուն։ Լուս ու մութ շուտ գելնի, կէրտա, էլման չայ, հաց, հ՚ըմեն բան անհրսապ կը բերա, տղեն էլման ձեն չէնա, չըսա՝ «հե՛րք ա»։

Տանտեր կառնի տղեն կէրտա ուր պաղչեն, տղին կըսա.— Կաշի՞ս հ՚իտա բանցը կուտոց, հըլա բա՛ց։

Տղեն հող թե խուշկին կիտա դեն, կաշկի, կը տեսնի օր հ՚ըմեն իսնի գլուխ ա, կըսա տղին.—Դու խելացի էր, ինչ օր բերեցինք, չըսիր՝ «հե՛րք ա», քու գլուխ լե կը կտրենք. դե՛ գնա՛, աստված քու հետն էր։

Էտ տղեն ա, խոլըճա, կէրտա քաղաք մի, ուրին ձեռք մի խորոտիկ շոր կէնա, կը դառնա, կէրտա տուն։ Ուրին քոշկ ու սարեմ՚ կը շինա, կէղնի ծանտր թուճար մի։

Տղեն օրմ՝ դելնի, ուր մամ կը ճամբա մեկ մարդում՝ տուն հ՝ուղնկան. մամուն թանպի կէնա.— Ընտոր կըսիս, ուր ախճիկ էլ չթորկիմ էրթա դարձ, խելքտի կտրա՝ տո՛ւր։

Տղի մամ գելնի, խաս շորեր կը հագնի (չկա՞ խաս շոր)[1], կէրտա ախճկան հոր տուն խնամաթոռ։ Խնամաթոռ կը դնին, կը նստի։

Կը բերեն հաց-բան, կըսա.— Երբոր իմ խոսք տեղ բերիք, կուտեմ։

Կ՝ըսին.—Քու խոսք ի՞նչ ա, օր մեր գումանք էղնի, կը կատարինք։

— Աստծու հրամանքով, հայրապետաց կանոնով՝ քու ախճիկ տուր իմ տղին։ Հըմա, բանմ՝ լե կըսիմ։ Ես իմ հարս օր տարա, էլ չը թորկիմ օր հ՝իգա դարձ։

Էտ ախճկա պապն ու մամ շատ տուշուրմիշ կէղնին, մեկ ճամբախ մը չկրնան գտնին, կըսին.— Էտ խոսքեր օր դու կըսիս, ըսկի կէղնի՞, օր ախճիկ ուր հոր տուն դարձ չէրտա։

Մամ կըսա.— Հըկեր խապուլ կէնիք, տվեք։

Ախճկա մամ ու պապ կըսին.— Հըկեր կը հարցուս, դեմով մի ըսկի լայեղ չէ քըղի խապար տանք, հըմա դեմով մը դու էկեր իս, պետք չէ քըղի դարտակ դարձունք։

Կնիկ հ՝ելավ, ախճկա մամու, պապու ձեռ պագեց, ինչ ձեր պլուխ ցավցում, խոլըսա, հ՝ուգեց, տարավ։

Էրկու տարի մնաց, տղեմ էղավ, տղի տարին լե թմավ։ Օրմ՝ ախճկա պապ ու մամ ըսին.— Մենք մեր ախճկա մեղքն ու արունք մտանք, էրտանք դարձ բերինք։

Մամն ու պապ գացին փեսի տուն, շատ լավա ընկան, փեսեն չտվեց, հինկ անդամ գացին ու էկան։

Տղեն ըսեց.— Ես հալիվորու իտա մեկ թանպին պտի չպահիմ, շոպիմ, տեսնամ ի՞մալ կէղնի։

Տղեն գելնա, ախճիկ կիտա, կը տանին, թանպի կէնա թե.— Չէղնի թողիս դուս հ՝ելնա, խարիպ մարդ լե չթողիս քու տուն։

Զոկանճ ըսեց.— Օր էրկնից ղհրիշտակ լե գա, հազար քիսա փարա լե տա, պտի չթորկիմ օր ոտք շեմ հ՝ընցու, վո՛ւ, ես քոռցե՞ր իմ։

Տարան դարձ։ Խոլրճա, տղա ղու տղա իս, ուր շորեր փոխեց,

1։ Բացատրությունը պատմողինն է (Ծ. Կ.)։

քիսեն լիք օսկի լըցեց, գնաց աներոջ տուն։ Ձին տարավ թավլեն[1] կապեց։

Ըտոր զոնկանճ էկավ, ըսեց.— Քա՛, յաման, ախպեր, իմ ախճիկ հուդա յա, բերեր իմ դարձ։ Իմ փեսեն կը լսա, ախշար կա՛վիրա։

Տղեն ըսեց.—Ա՛ռ քզի իտա տաս օսկին, հ՚ըսօր գիշեր պարկիմ քու ախճկա մոտ, լուսումթին կէրտամ շուտ, օր դա, չտեսնա։

Չէ՛, զոնկըճի նմզեր կը թուլնա, կէրտա, ախճկան կըսա։

Ախճիկ կըսա.— Ըսկի էղնելոց բան ա՞. էտ բան չէղնի։

Կիգա, կըսա.— Ախճիկ խայիլ չէղնի։

Տղեն կըսա.— Ա՛ռ քըզի իտա քսան օսկին։

Էլման խայիլ չէղնի։ Խոլըըսա, տղեն քառասուն օսկի կիտա, զոնկաճ կառնի, կը տանի ախճկան նշանց կիտա, կըսա.

— Քիչ փարա չէ, հըրիր տարի ուտիս, չը խըլըսի։

Ախճիկ կըսա.— Քա՛, մերիկ, վաղ պտի չըսին. «Էտ փարեն հ՚ո՞ւստեն ա»։

— Քա՛, լաո՛, ես կը բերիմ, քըզի կիտամ, քու իրկա հառեջ, դըհա հ՚եվելի պատիվ կէղնի քըզի։

Ձէ, ախճիկ խելքի էկավ։ Զոնկաճ բերեց ուր ախճիկ, ախճկա հօրոց հ՚օդեն, էրկըսին տեղ թալեց, հ՚ինք գնաց պարկավ։

Տղեն ըսեց.— Օրոց տար, թավլի փողան դիր, արի, դիլա, մըզի լաղաթ չի տա։

Ախճիկ կը տանի օրոց թավլի ճար, տղեն լե մեջ, կիգա, շորեր կը հանի։

Տղեն կըսա.— Դու պարկի, ես էրտամ ձին ջրեմ ու գամ, խուրճին գարի կա, էն լե տամ ուտի, օր սապախտան էն դլուխ շո՛ւտ էրտամ, մարթ չիմնա։

Խոլըճա, տղեն գելնա, ձին կը սաղա, տղեն օրոցով կը փաթըթա, կառնի ուր գիրկ ու կը հեծնա ձին, կէրտա. «Տո՛ւն, դո՞ր իս, էկա քըզի»։

Հարս լե կը քնի, կիմնա օր լուս ա, կաշկա օր մարթ գացեր ա։

Կըսա.— Վա՛յ, ես սև կապիմ, էտ իմա՞լ քուն ա ես քներ իմ, օր մարթ ուր ձին տեսի, էկի զիս խըլվըցուցի, էկի զիս պագի, գացի, ես չիմցեր իմ։ Գելնա քեֆով ուր շորեր կը հագնի, հըմա փարի խընդրելուն ու ուր էրած բանին մտածելուն, տղեն ու օրոց մոռցեր ա։ Ջուր կառնի կէրտա թավլի ճար, լվացվի, կաշկա օր

---

1 Բնագրում՝ թավեն (Ս. Կ.)։

տղեն-օրոց չկա։ Հրմա կը դարկա ուր գլխուն ու շոքերուն։ Լալման դիդա մամուն ահվալ կըսա։

Մամ լե շուտ մը կը բերա քրոչ ու պըլընգ կը թափա, կէնա խոնդախ, կտավ պատնքի տեղ կը քաշա վրեն ու կէրտա, իրիցուն կը խանչա, բերա, կը տանին հորին, էրկու օր սուկ կէնին։

Փեսեն ջուհապ կը ճամբա աներոջ թե. «Շո՛ւտ, առ քու ախ-հիկ, արի՛»։

Էն լե խապար կը ճամբա թե. «Ինք սաղ կենա, տղեն արև տվեց ուրին։ Տղի ութ թըմի, պատարագ էնիմ, հոկու հաց տամ ու կառնիմ, դիրամ»։

Ութ կը թըմի, հոկու հաց կերան։ Մամն ու պապ կառնին ախ-հիկն ու կէրտան։ Ախճիկ ղլուխ սև կապեր ա։ Նիյաթ էնելեն, լալ-ման կէրտա, կմտնա տուն։

Փեսեն կըսա.— Էս ի՞նչ էղեր ա, տղեն թե մեռեր ա, մենք սաղ մնանք։

Աներ ու ղոնկաճ գիդան, փեսի ձեռ կը բռնին, կըսին.— Դու սաղ մնաս, ըշտե տղեն հինկ օր հիվընդցավ, ըսկի չը գիցանք, ինչ էր ըտոր ցավ։

Քիչմ՝ խսա կէնին, կը ժղլին, փեսեն ուր կնկան կըսա.

— Դնա՛ հ՝օղեն, ձմերուկ մի կա, բի՛ր ուտինք։

Ախճիկ կէրտա հ՝օգեն, կը տեսնի օր հանդա, ուր տղեն օրոցով հ՝ուտա յա, էլ հ՝օդից չգա։

Փեսեն կըսե ղոնկրճին.—Դնա՛, տե՛ս, քու ախճիկ հ՝որի՞ն չի դա։

Ղոնկաճ կէրտա օր ախճիկ գիլա։

— Արի տես,—ըսեց մամուն,— ինչ սև էկեր ա վրես, տղեն օրոցով հ՝ուտա յա։

Մամ լե դիլա, կը շիվարի։

Շատ կանքընան, փեսեն աներոջ կըսա.— Հ՝ելի՛ էրտանք տեսնինք, հ՝որի՞ չէկան, հ՝անքնցան։

Կէրտան օր շիվարած գիլան։

Աներ լե կը տեսնա տղեն օրոցով հանտա, հ՝ուտա յա, հ՝ինք լե կը շիվարի։

Փեսեն լե կըսա.— Ես օր քու ախճիկ չթորկենք հիգեր դարձ, դու հ՝որի՞ն խայիլ չէղնեք. էլ քու ախճիկ իմ մամն ու քուրն ա, առեք, գացեք, ընձի պետք չէ։

Շորեր վրեջեն կառնի ու ճամբու կը դնա, կէրտան։

Էլ չկարգվի, տղեն կը մեծըցու ու կը կարդա։